

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը, ավազանի անունով Ավետիք, ծնվել է 1919 թվականի փետրվար ամսի 16-ին Բաղդադում, արհեստավորի ընտանիքում։ Հայրը Հովհաննես, դիլիջանցի է, իսկ մայրը Նարգիզ՝ վանեցի։

1931 թվականին ուսումնատենչ պատանին, ավարտելով Բաղդադի հայոց Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ուղևորվում է Երուսաղեմ, աշակերտելու Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանին, որի դասարանական բաժնի ընթացքն ավարտելով հաջողությամբ, 1936 թվականին սարկավագ է ձեռադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանից։

1939 թվականին ավարտելով Ընծայարանի լսարանական բաժինը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարք Նշանյանից։

Այնուհետև երիտասարդ և խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է գործունեության լայն և պատասխանատու ասպարեզ։ Նա ձեռնհասորեն վարում է Երուսաղեմում Ժառանգավորաց վարժարանի փոխ-տեսչի, Ս. Աթոռի տպարանի տեսչի, «Սիոն» ամսագրի խմբագրական մարմնի անդամակցության և Սրբոց Թարգմանչաց վարժարանում ուսուցչական պաշտոնները, մինչև 1944 թվականը։

1946—1948 թվականներին, ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա, Ռիչմոնդ, Վիրջինիա և Վաշինգտոն քաղաքներում կատարում է հոգևոր հովվի պաշտոն։

1948—1950 թվականներին հետևում է Ֆիլադելֆիայի Տեմբլ համալսարանի դասընթացներին, միաժամանակ գործուն և ղեկավար մասնակցություն ունենալով ԱՄՆ-ի Հայ Եկեղեցու երիտասարդական կազմակերպություններում։ Այդ տարիներին, երիտասարդական ուժերով կազմում է «Թորգոմյան երգչախումբ»-ը, հայ եկեղեցական երաժշտությունը ծանոթացնելու համար ամերիկացիներին։

1955 թվականին Թորգոմ վարդապետը վերադառնում է Ս. Աթոռ՝ Երուսաղեմ, ուր նշա-

նակվում է Ծառանգավորաց վարժարանի և Ընծայարանի տեսուչ և դիվանապետ, պաշտոններ, որոնք նա վարում է արդյունավորությամբ, մինչև 1960 թվականը։ Նույն տարիներին անդամակցում է նաև վանքի Տնօրեն ժողովին և ընտրվում է Միաբանական ժողովի առաջին ատենապետ։

Երուսաղեմում հրատարակում է «Հայ ուխտավորը» և «Խմբի հետ» աշխատությունները։

1960 թվականին վերադառնում է ԱՄՆ, իր ուսումը շարունակելու Քեյմբրիջի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում։

Նույն և հաջորդ տարիներին հրատարակում է «Ամուսնության օրհնությունները» (հայ հարսանեկան երգեր եվրոպական ձայնանիշերով) և «Սարկավագ» անունով երկու ձայնասկավառակներ։

1962 թվականի գարնանը ընտրվում է թեմակալ առաջնորդ Կալիֆոռնիայի թեմի։

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից։

Գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը պատրաստված և հավատավոր հոգևորական է։ Սրբազանը գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում։ Ազգը և Եկեղեցին նրանից սպասում են նորանոր արդյունքներ։ Սրբազանը կարդարացնի այդ ակնկալությունը։